խաչապաշտ թագաւորը, որի աղջիկն առնում է կռապաշտ թագաւոր [№ 10, էջ 995—996 (14—15)]։

Բոլոր Աղրամելիքի և Սանասարի զրոյցը բովանդակող փոփոխակներից № 1, 3, 4, 6, 8, 10, 12, 13, 14 և 16, մանաւանդ վերջնից, պարզ երևում է որ այդ Հայոց թագաւոր է, իսկ № 13-ը արդէն ունի «Պապ Կապուտկողի թագաւոր»։ Արդ ո՞վ է այդ Ղումբիկը, ո՞ր հայ թագաւորը կամ գոնեա իշխանն է։ Եւ որովհետև մեր հայ թագակիրների մէջ չկայ մի այնպիսի անուն, որ թէկուզ հեռաւոր նմանութիւն ունենար այս անուան, ուստի ես մտածում էի նախ քան № 17-ի գոյութիւնն իմանալս այսպէս։ Մեր վէպում թագակիրները կոչւում են համարեա միշտ քաղաքների անունով. Կաղզուանու ամիրայ, Բաղդըտու խալիֆայ (№ 1), Կապուտկողի թագաւոր (№ 10) Մսրայմելիք և այլն. և ինչպէս պաշտօնի անուն արաբերէն ամիրայ բառը մի տեղ որ և է անհասկանալի պատճառով դարձել է անձնանուն Ամիրան[1], այնպէս էլ կարող էր Կապուտկողի տեղ բռնել է—Ը. դարերում նոյն կողմերը արդէն յայտնի Կումայրի-Կիւմրին, այժմ Ալեքսանդրապոլ։ Բայց Կումրիի թագաւորը Կումրի հնչուելով փոխուել դարձել է Կումրիկ, ինչպէս հիմի, հիմիկ, պատի, պատիկ. իսկ Կումրիկը հնչուել է Ղումբիկ, ինչպէս որ ցարդ հայերն ասում են Կուրբան, ղուրբան, Կուրան և Ղուրան, որ և համարուել է անձն, թագաւոր։ Արդ № 17-ի «Հայոց խաչապաշտ թագաւոր Կումրի»-ն գալիս է միանգամայն հաստատելու մեր այդ ենթադրութիւնը, որ ժամանակին միայն ծանօթներիս ժպիտն էր յարուցանում[2]։

Կումրի թագաւորի դուստր Մանիշակի անցքը, որին նման են և այլ փոփոխակներ, մեզ յիշեցնում է Տիգրանուհու (և Աժդահակի) զրոյցը, և այս կարծիքին ոյժ է տալիս դիւցազնուհու այս կամ այն դիւցազնի քոյր լինելը (№ 1, 6, 12, 13 և մեր այս 17-ը)։

---

1. «Կապուտկողի Ամիրանի մօտ... ասաց Ամիրան»· որ ունի հետեւեալ ծանօթութիւնը. «Գաւթի հաները, Խանդութ-Խաթունի հայրը» (Դր. Բալասեան. Պատիկ Մեներ. VII, էջ 7. Բաթում 1904)։

2. Նոր-Բայազիդի հայոց դպրոցի ուսուցիչ Մարգիս Նասխիդեանցն ինձ պատմեց, որ իր պապը Գորու գաւառի Ախալ-Սոփել գիւղից. Անուշ դաղթածներ, ասում է եղել. «Երբ մենք Թողեցինք Կումբրի գնալ եւ աղօթել· մեր գործն այլեւս յաջող չէ գնում· իսկ մերոնք· ո՞րդի, գնում էին Օցի աղօթելու»։ Այստեղից երեւում է մասամբ եւ հասկանալի դառնում Կումբրի նշանակութիւնը մեր վէպում· այլ եւ այն· որ Կումբրին եւ Օցին, այսինքն Անին· նոյնն են համարուել կամ մէկը միւսի տեղ բռնել. ինչպէս որ Բաբելոնի տեղ Բաղդատ· սորա տեղ Մուսուլը, որ եւ շփոթուել է եւ ծուլուել Մսրայ՝ Եգիպտոսի հետ եւ այլն։